Կարգապահական գործ թիվ ԿԳ-15062

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 285-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/168-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՄԼԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, կազմով՝ նիստը նախագահող Ալեքսանդր Սիրունյանի, մասնակցությամբ Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով պատասխանող՝ փաստաբան **Համլետ Տերտերյանին (արտոնագիր թիվ 1109)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի **2015 թվականի հունիսի 1-ի** տեղեկանքի համաձայն անդամավճարի գծով պատասխանողի պարտքը կազմել է **15.000** Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը

Պատասխանողի կողմից սահմանված անդամավճարը չմուծելու **2015 թվականի հունիսի 1-ին** վերջինիս նկատմամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19 հոդվածի առաջին մասի 5-րդ կետի «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ եւ կարգապահական գործը հանձնվել է Խորհուրդ:

3. Պատասխանողի բացատրությունները

Պատասխանողը նիստին չի ներկայացել եւ բացատրություն չի տվել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում այն, որ **2015 թվականի հունիսի 1-ի** դրությամբ անդամավճարի գծով Պատասխանողի պարտքը կազմել է **15.000** Հայաստանի Հանրապետության դրամ, որը, չի վճարվել (հիմք՝ ՀՀ փաստաբանների պալատի **2015 թվականի նոյեմբերի 30-ի տեղեկանքը**)

5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Խորհուրդ արձանագրում է, որ նախկինում Պատասխանողը եւս կատարել է նույն իրավախախտումը, որի կապակցությամբ վերջինիս նկատմամբ հարուցվել են թվով 5 կարգապահական վարույթներ: Ընդ որում, պատասխանողն ունի 2 չմարած տույժ, որոնք նշանակվել են անդամավճար չվճարելու իրավախախտման կապակցությամբ:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Վերոգրյալի հաշվառմամբ, Խորհուդրը գտնում է, որ Պատասխանողը ենթակա է կարգապահական պատասխանատվության հետեւյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ պարբերության եւ 19-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի, ինչպես նաեւ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի համաձայն փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ, որոնք, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 7-րդ կետի համաձայն կատարվում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:

Նույն Կարգի 21-րդ կետի համաձայն փաստաբանի վերոհիշյալ պարտականությունը չկատարելն առաջացնում կարգապահական պատասխանատվություն:

Սույն կարգապահական գործով Խորհուրդը հաստատված է համարում, որ Պատասխանողը չի վճարել սահմանված անդամավճարը: Պատասխանողի անձը բնութագրվում է անդամավճարների գումարները սիստեմատիկաբար չվճարելով:

Պատասխանողի անձը դրական բնութագրող փաստեր գործով ձեռք չեն բերվել:

Նկատի և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի հինգերորդ մասի 14–րդ կետով, 39-րդ հոդվածի առաջին մասով, 39.7. հոդվածի հինգերրորդ մասի 1-ին կետով, 39.9. հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետով, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի հինգերորդ մասի 1-ին կետով, Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Տ՝

1. ***Փաստաբան Համլետ Տերտերյան (արտոնագիր թիվ 1109) մեղավոր ճանաչել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման մեջ եւ նրա նկատմամբ կիրառել 10.000 ՀՀ դրամի չափով տուգանք կարգապահական տույժը:***
2. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուղարկել փաստաբան Համլետ Տերտերյանին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում եւ օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող **Ալեքսանդր Սիրունյան**